ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4292-Ա « 03 »սեպտեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի Հ.49-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

1.Երևանի քաղաքապետի 2017 թվականի հունվարի 16-ի «Սոցիալական գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող համայնքային հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը սահմանելու մասին» հ.49-Ա որոշման.

1)վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՏԱՐԱԾՎՈՂ ԱՐՏԱՔԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՎԱԶԴԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՎԱԶԴ ՃԱՆԱՉՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ».

1) 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Սահմանել Երևան քաղաքի վարչական սահմաններում տարածվող արտաքին սոցիալական գովազդը, որպես սոցիալական գովազդ ճանաչող համայնքային հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի:».

2) Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
03.09.2026թ.
Հ. 4292 - Ա որոշման

«Հավելված
Երևանի քաղաքապետի
2017թ. հունվարի 16-ի
հ. 49-Ա որոշման

Կ Ա Ր Գ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՏԱՐԱԾՎՈՂ ԱՐՏԱՔԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՎԱԶԴԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՎԱԶԴ ՃԱՆԱՉՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Երևան քաղաքի վարչական սահմաններում տարածվող արտաքին սոցիալական գովազդը, որպես սոցիալական գովազդ ճանաչող համայնքային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) ձևավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները:
2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Գովազդի մասին» օրենքով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:
3. Հանձնաժողովը հասարակական հիմունքներով գործող մարմին է, որի անհատական կազմը հաստատվում է Երևանի քաղաքապետի կարգադրությամբ: Հանձնաժողովը կազմված է հանձնաժողովի նախագահից, նախագահի տեղակալից, հանձնաժողովի քարտուղարից և հանձնաժողովի մյուս անդամներից:
4. Հանձնաժողովին ուղղված դիմումներն ընդունում և հանձնաժողովի տեխնիկական սպասարկումն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) առևտրի, ծառայությունների և գովազդի վարչությունը:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

5. Հանձնաժողովը ձևավորվում է Երևանի քաղաքապետարանի և քաղաքացիական

հասարակության 8 ներկայացուցիչներից: Հանձնաժողովի 3 անդամ առաջադրվում է Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներից, իսկ 5 անդամ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից:

6. Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով աշխատակազմի Առևտրի, ծառայությունների և գովազդի վարչությունը www.yerevan.am կայքում տեղադրում է հայտարարություն՝ թեկնածուներ առաջադրելու համար:
7. Հանձնաժողովի կազմում յուրաքանչյուր քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից կարող է ընդգրկվել մեկ կամ երկու անդամ, որոնց գործունեությունը համընկնում է «Գովազդի մասին» օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջներին, տվյալ բնագավառում ունեն ավելի երկար փորձառություն (իրականացրել են բնագավառին առնչվող ծրագրեր, մասնակցել են պետական մարմինների կողմից ստեղծված աշխատանքային խմբերի, հանձնաժողովների աշխատանքներին, համագործակցել են միջազգային կազմակերպությունների հետ և այլն) և, որոնց մասնակցությունը կարող է նպաստել հանձնաժողովի առջև դրված խնդիրների ու նպատակների առավել արդյունավետ իրականացմանը:
8. Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու նպատակով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքէջում հրապարակված հայտարարության հիման վրա (հայտարարության մեջ նշված ձևով և ժամկետներում) դիմում են ներկայացնում Երևանի քաղաքապետին: Դիմումին կից պետք է ներկայացվի սույն կարգի 7-րդ կետով նախատեսված պահանջները հիմնավորող տեղեկատվություն:
9. Հանձնաժողովի անդամների թեկնածուների ամբողջական անվանացանկը կարող է համալրվել և փոփոխվել առաջադրող Երևանի քաղաքապետարանի կամ հասարակական կազմակերպությունների հիմնավորված առաջարկությամբ:
10. Սույն կարգի 8-րդ կետով սահմանված կարգով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից դիմում չներկայացվելու և հանձնաժողովի կազմը չհամալրվելու դեպքում Երևանի քաղաքապետարանն առաջարկություն է ներկայացնում համապատասխան պետական մարմիններ՝ իրենց բնագավառում գործունեություն իրականացնող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից մեկին առաջադրելու նպատակով:
11. Հանձնաժողովի անհատական կազմը Երևանի քաղաքապետի կողմից հաստատվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչությունը հանձնաժողովի անդամներին տեղեկացնում է հանձնաժողովի կազմում ընդգրկվելու մասին:
12. Հանձնաժողովն իր լիազորությունները ստանձնում է Երևանի քաղաքապետի կողմից ստեղծված հանձնաժողովի անհատական կազմի հաստատման օրվան հաջորդող օրը:

13. Սոցիալական գովազդի տեղաբաշխման պատվերները (դիմումները) ներկայացվում են Հայաստանի Հանրապետության նախարարությունների, գերատեսչությունների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների կողմից:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

14. Հանձնաժողովի գործունեության նպատակն է որպես սոցիալական գովազդ ճանաչել արտաքին սոցիալական գովազդը (այսուհետ՝ գովազդ), որը տարածվելու է միայն Երևան քաղաքի վարչական սահմաններում:
15. Հանձնաժողովը հավանության է արժանացնում առևտրային բնույթ չկրող (շահույթ ստանալու նպատակ չհետապնդող)՝ մարդու իրավունքների և պարտականությունների, բնակչության առողջության պահպանման, ինչպես նաև առողջ ապրելակերպի և սոցիալական պաշտպանության, կամավորության, բնության պահպանության, կրթական ծրագրերի, հայրենասիրական դաստիարակության, մշակույթի պահպանման, տարածման ու զարգացման, աղետների դիմակայման, ազգային շահերի պաշտպանության և այլ բնագավառների վերաբերյալ սոցիալական գովազդը:

16. Հանձնաժողովի գործառույթներն են՝
    1) Ներկայացված դիմումների ուսումնասիրումը: Դիմումին կից ներկայացվում են գովազդի որպես սոցիալական գովազդ ճանաչման հիմնավորումը, գովազդի գունավոր ուրվանկարը (էսքիզը)՝ գովազդի չափերի նշումով և (կամ) հոլովակը, կազմակերպության դեպքում պետական գրանցման քաղվածքը.
    2) Սոցիալական գովազդի արտադրության, տեղաբաշխման և տարածման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ներկայացնելը:
17. Հանձնաժողովը գովազդը որպես սոցիալական գովազդ ճանաչելու կամ ճանաչելը մերժելու մասին կայացնում է որոշում:
18. Հանձնաժողովի որոշման վերաբերյալ Երևանի քաղաքապետը դիմումատուին տեղեկացնում է գովազդը որպես սոցիալական ճանաչվելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:
19. Գովազդը որպես սոցիալական ճանաչելը մերժելու մասին որոշումը դիմումատուի կողմից կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

20. Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում և իրականացնում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նախագահը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Առևտրի, ծառայությունների և գովազդի վարչությունը համակարգող Երևանի քաղաքապետի տեղակալն է:

Հանձնաժողովի անդամներից ձայների պարզ մեծամասնությամբ ընտրվում է հանձնաժողովի նախագահի տեղակալ և քարտուղար::

21. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

22. Հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ հանձնաժողովն իր գործունեությունը կարող է իրականացնել էլեկտրոնային կապի ժամանակակից (էլեկտրոնային փոստ, տեսակոնֆերանս և այլն) միջոցներով:

23. Հանձնաժողովի գործունեությունը էլեկտրոնային կապի ժամանակակից (էլեկտրոնային փոստ, տեսակոնֆերանս և այլն) միջոցներով իրականացվում է սույն կարգով սահմանված դրույթներին համապատասխան:

24. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելիի մասնակցության դեպքում:

25. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելիի կողմ ձայներով: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

26. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները.

2) նշանակում է հանձնաժողովի նիստի անցկացման օրը, ժամը և վայրը.

3) հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում նիստի օրակարգի նախագիծը.

4) վարում է հանձնաժողովի նիստերը.

5) որոշում է հանձնաժողովի աշխատանքների հետ կապված հարցերի, դիմումների քննարկման հերթականությունը՝ համաձայնեցնելով հանձնաժողովի անդամների հետ.

6) հանձնաժողովի որոշումները մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Երևանի քաղաքապետին.

7) իրականացնում է սույն կարգով իր իրավասությանը վերապահված այլ գործառույթներ:

27. Հանձնաժողովի նախագահի բացակայության ժամանակ նրա լիազորություններն

իրականացնում է հանձնաժողովի նախագահի տեղակալը:

28.Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի աշխատանքներին.

2) ուսումնասիրում է հանձնաժողովում քննարկվող փաստաթղթերը.

3) մասնակցում է հանձնաժողովի նիստերի քվեարկություններին.

4) ծանոթանում է նիստերի արձանագրություններին.

5) իրականացնում է սույն կարգով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

29.Հանձնաժողովի քարտուղարը՝

1) նախապատրաստում է հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը, անհրաժեշտ նյութերը և դրանք ներկայացնում հանձնաժողովի նախագահին.

2) ոչ ուշ, քան հանձնաժողովի նիստից մեկ օր առաջ հանձնաժողովի անդամներին է ուղարկում նիստի օրակարգի նախագիծն ու նախատեսված հարցերին առնչվող նյութերը.

3) կազմակերպում է հանձնաժողովի նիստի նախապատրաստումը.

4) կազմակերպում է հանձնաժողովի գործավարությունը.

5) արձանագրում է հանձնաժողովի նիստերը.

6) կազմում է հանձնաժողովի կողմից ընդունվելիք որոշումների և հաշվետվությունների նախագծերը.

7) հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում հանձնաժողովի որոշումների և հաշվետվությունների նախագծերը.

8) իրականացնում է սույն կարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

30.Հանձնաժողովի անդամի մասնակցությունը դադարեցվում է, եթե այդ անդամը՝

1) երկու անգամ անհարգելի բացակայել է հանձնաժողովի նիստերից.

2) դիմում է ներկայացրել Երևանի քաղաքապետին՝ հանձնաժողովի կազմից դուրս գալու վերաբերյալ.

3) ազատվել է աշխատանքից.

4) մահացել է:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**